ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի վերափոխման ռազմավարության թիմը, նվազագույնը 5 ամիս ժամկետով, հրավիրում է համագործակցության հետևյալ ուղղություններով մասնագետների.

1. Ռազմավարական խորհրդատվություն / ռազմավարական կառավարում,
2. Ռազմավարական ծրագրերի կառավարում և մշտադիտարկում,
3. Վերլուծություններ,
4. Ծրագրային հայտերի մշակում (հայերեն, անգլերեն և(կամ) ռուսերեն լեզուներով),
5. Հայաստանյան և միջազգային գործընկերների հետ համագործակցության զարգացում,
6. Թվային մարքեթինգ / սոցիալական մեդիայի մարքեթինգ,
7. Հայերենով, անգլերենով, ռուսերենով և(կամ) ֆրանսերենով հաղորդագրությունների մշակում, սրբագրում, խմբագրում,
8. Թարգմանություններ (վերոնշյալ լեզուներով),
9. Գրաֆիկ / վեբ դիզայն:

Կախված ուղղությունից, որին կդիմեք, հաշվի են առնվելու հետևյալ պահանջներն՝ ըստ համապատասխանության.

- Ռազմավարական և համակարգային մտածողություն, մեծ պատկերը տեսնելու ունակություն,
- Թիմային աշխատանքի հմտություններ,
- Վերլուծական, քննադատական և կոնցեպտուալ մտածողություն,
- Տարբեր առաջադրանքների վրա միաժամանակ աշխատելու և խնդիրների լուծման հմտություններ, կոգնիտիվ ճկունություն, ստրեսակայունություն,
- Ճկունության և փոփոխություններին պատրաստ լինելու բարձր մակարդակ,
- Ստեղծագործ միտք,
- Մանրուքների նկատմամբ ուշադրության և աշխատանքում կարգապահության բարձր մակարդակ,

- Կատարելության և բարձր արդյունավետության ձգտում,
- Պատասխանատու և պրոակտիվ վերաբերմունք,
- Հայրենիքի զարգացման հանդեպ առաքելության բարձր զգացում,
- Բարեվարքության բարձր մակարդակ,
- Ծարունակական սովորելու, աճելու և ինքնազարգացման ունակություն ու ցանկություն,
- Հայերեն և աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ օտար լեզուների իմացություն:

Առավելություն է տրվելու նաև հետևյալ հմտություններ, գիտելիքներ և փորձ ունեցող անձանց (ըստ տվյալ ուղղությանը համապատասխանության).

- Համապատասխան ոլորտում մասնագիտական փորձառություն (համապատասխան հմտությունների և գիտելիքների (տեղեկացվածության) առկայությամբ),
- Փոքր թիմեր առաջնորդելու փորձառություն,
- Հաղորդակցական և բանակցությունների հմտություններ,
- Բազմազան ոլորտային գիտելիքներ և փորձ,
- Բազմազան գործառնական հմտություններ:

Թիմի բոլոր անդամներին կտրվի հնարավորություն.

- ✓ անմիջական մասնակցություն ունենալ երկրի ապագայի զարգացման օրակարգի մշակմանն ու իրագործմանը,
- ✓ աշխատել ինչպես պետական կառավարման, այնպես էլ հանրային տարբեր օղակների հետ, ձեռք բերել պրոֆեսիոնալ եզակի փորձ և հմտություններ,
- ✓ ունենալ անհատական զարգացման պլաններ և մասնակցել համապատասխան թրենինգների, ապահովել մասնագիտական աճ,
- ✓ դրական արդյունքների դեպքում ստանալ համապատասխան շնորհակալագիր և երաշխավորագիր Վարչապետի օգնականի կողմից:

Դիմելու համար անհրաժեշտ է naira.paronikyan@gov.am էլ. փոստի հասցեին ուղարկել Ձեր CV-ն՝ նամակի տեքստում նշելով այն ուղղություն(ներ)ը, որոնց ցանկանում եք դիմել, և առավելագույնը 2-3 նախադասությամբ ներկայացնել, թե ինչով է պայմանավորված Ձեր ընտրությունը: